ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«29» հոկտեմբերի 2018 թվականի N: 231 ք.Գյումրի

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐԱՋՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Ռուզաննա Արաջյանի 2018 թվականի հոկտեմբերի 23-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գետափի Գուրգեն Արշակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Արաջյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2018 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ:
2. Ռուզաննա Արաջյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գետափի Գուրգեն Արշակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության պատմության ուսուցիչ Արմենուհի Տոնոյանին:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է